



5. Հայաստանի մասին հրատարակված օտարալեզու գրականության ձեռքբերումը
6. Գրադարանում բացակա հայաստանյան մամուլի համալրումը /ընթացիկ և հետադարձ /
7. Տպագիր արտադրանքի այլ տեսակների և էլեկտրոնային կրիչների ձեռքբերումը

Գրադարանը համալրումն իրականացնում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Մասնավորապես, եթե գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, համալրումն իրականացվում է ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջի, որի իրականացման համար, գրադարանի տնօրենի 20 մայիսի 2014 թվականի N78-Ա հրամանով, ստեղծվել է գնահատող հանձնաժողով:

Գրադարանի գնահատող հանձնաժողովի նպատակն է առավել արդյունավետ կերպով ֆինանսական միջոցներն ուղղել պահանջարկ ունեցող մասնագիտական, տեղեկատվական և մշակութային բարձրարժեք հրատարակությունների ձեռքբերմանը:

Գնահատող հանձնաժողովը գնումներն իրականացնում է.

1. Հեղինակային իրավունք ունեցող անձանցից
2. Իրավաբանական անձանցից
3. Ֆիզիկական անձանցից, որի դեպքում ֆիզիկական անձը, պարտադիր պետք է ներկայացնի իր կողմից առաջարկվող գրականության ցուցակը՝ նշելով յուրաքանչյուր միավորի գինը ՀՀ դրամով
4. Գրավաճառ ցանցերից
5. Աճուրդներից և այլ հնարավոր հարթակներից

Գրադարանի գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի համար: